

ԱԿՆԱՐԿ ՀԱՅԵՐԷՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՄԲ ԲԱՂՆԻՔԻ ՊՂՆՁԵԱՅ ԿԱԽԱՄԱՆՆԵՐՈՒ ՎՐԱՅ

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ
adakessian@haigazian.edu.lb

ՄՈՒՏՔ

Մեր նախորդ ակնարկով լուսարձակի տակ առինք բաղնիքի հայկական թասերու գլխատր երեք տիպերէն մին՝¹։ Ստորեւ կը ներկայացնենք երկրորդը՝ բաղնիքի պղնձեայ կաւամանները։

Ասոնք ծանօթ են «քիլտան, գիլտան»² անունով։ Մենք պահպանելու համար աւանդուածը, նուազեցնելու շփոթը եւ այս տիպը զատորոշելու համար, կը գործածենք բաղնիքի պղնձեայ կաւաման անուանումը։

ԲԱՂՆԻՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊՂՆՁԵԱՅ ԿԱԽԱՄԱՆՆԵՐՈՒ

Նիւթը ուսումնասիրելու համար հարցուցինք հաւաքորդներու³, թերթատեցիներ հայկական պղնձեայ իրերու հաւաքածոյ-նկարագիրքեր⁴, յօդուած-

¹ Անդրանիկ Տագէսեան, «Ակնարկ հայկական արձանագրութեամբ պղնձեայ թասերու վրայ», *Հայկազեան հայագիտական հանդէս*ին, ԽԲ/1:2022, էջ 339-50:

² Պերճ Կարապետեան, «Հայկական պղինձը 1600-1915թթ.», *Հայկազեան հայագիտական հանդէս*, Զ:1977-78, էջ 240:

³ Կարօ Անտոնեան մեր ուշադրութեան յանձնեց պոլսոյ հնավաճառ Մուրատ Պիլի-րի կայքէջը (<http://www.muratbilir.com/Products/Bowls>), որումմատչեցանք 2 Յուլիս 2023ին: Արուեստաբան Հրազդան Թոքմաճեան տրամադրեց երեք նկարներու չափագրութիւնները (հաղորդակցութիւն՝ 1 եւ 6 Յունիս 2022): Սասուն Սիմոնեան, Հիլմիա Հիլմի եւ Սերժ Հաքիմեան տրամադրեցին իրենց նմուշները: Դիմեցինք նաեւ այլ հաւաքորդներու: Շնորհակալութիւն՝ բոլորին:

⁴ Երկու նմուշի հանդիպեցանք Մարետա Կիրակոսեանի *Հայաստանի պատմութեան թանգարանի ազգագրութեան ֆոնդի մեքաղէ իրերի հաւաքածուն. 1 (XV-XIXդդ.)* (Անտարէս հրատ., Հայաստանի պատմութեան թանգարան, Երեւան, 2021) նկարագիրքին մէջ: Թոքմաճեանի պատրաստած *Գալէմքեարեաններ. Այնթապ-Դամասկոս-Հալէպ/The Kalemkarians: Ayntab-Damascus-Aleppo* (Տիգրան Մեծ, Երեւան-Հալէպ 2016). նաեւ՝ *A Legacy of Armenian Treasures: The Alex and Marie Manoogian Museum*, Edmond Y. Azadian (ex. Editor), Indiana University Press, 2013. նաեւ՝ *Էջմիածնի գանձեր*, Էրեբունի հրատ., Ֆիլանտոա, 1984. նաեւ՝ Osep Tokat, *Armenian Master Silversmiths*, Van Publishing Inc., Los Angeles, 2005. *Treasured Objects: Armenian Life in the Ottoman Empire 100 Years Ago*, Vazken Khatchig Davidian, Susan Paul Pattie, Gagik Stepan-Sarkissian (eds.), Armenian Institute, London, 2012 գիրքերուն մէջ չգտանք նմուշներ:

ներ⁵, դիմեցինք թանգարաններու⁶, յայտարարեցինք մամուլով⁷ եւ դիմատետրով⁸, ընդգրկեցինք նաեւ մեր հաւաքածոյին օրինակները եւ կարելի եղաւ մէկտեղել շուրջ 60 նմուշ:



Վարդան Տէրունեանի լուսանկարը, որուն ծախս կողմի վերի անկիւնը իրար վրայ շարուած կը տեսնենք խնդրոյ առարկայ կաւամաններէն⁹

⁵ Պերճ Կարապետեան վերոյիշեալ յօդուածով կ'առանձնացնէ այս կաւամանը, կու տայ արձանագրութիւնը (թիւ 8, էջ 240), բայց ոչ՝ չափագրութիւնը: Իսթանպուլի *Սուրբ Փրկիչ* պարբերաթերթի Նոյեմբեր-Դեկտեմբեր 2010ի համարին մէջ, հանդիպեցանք երեք նմուշի (զայն մեր ուշադրութեան յանձնեց Կարօ Աբրահամեան, որուն կը յայտնենք մեր շնորհակալութիւնը):

⁶ Սարդարապատի ազգագրութեան թանգարանի պղնձեայ իրերու շտեմարանին մէջ գտանք 13 նմուշ, որոնցմէ քիչերը արձանագրութիւն, կնիք կամ թուական ունին: Շնորհակալ ենք թանգարանի աշխատակիցներուն եւ տնօրէն Կարէն Փաիլեանեանին: Ծիծեռնակաբերդի Տեղասպանութեան յուշահամալիրը եւ Կիլիկիոյ հայոց կաթողիկոսութեան թանգարանը չունին այս կաւամաններէն: Պետրոս Թորոսեան Օգոստոս 2022ին Մ. Նահանգներու Ուոթըրթաունի (Մետէչուսէց) Armenian Library and Museum of America կատարած իր այցելութեան մեզի դրկեց իր նկարած 6 նմուշներու պատկերները (շնորհակալութիւն՝ իրեն, եւ՝ թանգարանի գործադիր տնօրէն Ճէյսըն Սոհիկեանի թոյլատրութեան): Այս թասերէն առաջին երեքը պատկանած են Պերճ Կարապետեանի հաւաքածոյին: 20 եւ 22 Նոյեմբեր 2021ին Երեւանի Յովհաննէս Ծարամբէեանի անուան Ժողովրդական արուեստներու թանգարանի շտեմարանին մէջ գտանք միակ նմուշ մը, մինչ Երեւան քաղաքի պատմութեան թանգարանի շտեմարանին մէջ գտանք 5 նմուշ, որոնց երկուքը կնիքներ ունին: Յատուկ շնորհակալութիւն՝ համապատասխանաբար տնօրէններ Լուսինէ Թորոյեանին եւ Արմինէ Սարգսեանին:

⁷ Տե՛ս՝ *Հարթօնք* 4, 9 Յունիս 2022ի թիւերը:

⁸ Դիմատետրի յայտարարութեան արձագանգեց հայրենի նկարիչ-գորգագործ Աննա Մանուկեան 26 Մայիս 2022ին, մեզի դրկելով իր նմուշին նկարն ու չափագրութիւնը: Արձագանգեց նաեւ Քանատայէն ծանօթ խմբագիր, գրող Վրէժ Արմէն, մեզի դրկելով իր նմուշին նկարն ու չափագրութիւնը եւ այլ մանրամասնութիւններ:


⁹ Հանրաժանաօթ լուսանկարիչ Վարդան Տէրունեան (1888-1954), Հալէպի մէջ, կենցաղային բնոյթի նկարներ լուսանկարած է մասնաւորաբար 1922-38ին, ապա տե-

Այստեղ պիտի ջանանք ներկայացնել պղնձեայ այս կաամաններուն մշակման եղանակը, արձանագրել ընդհանրական յատկութիւնները, արձանագրութիւնները եւ յանգիլ պայմանական եզրակացութիւններու, մասնակի հիմք մատուցելով յառաջիկային կատարուելիք աւելի ամբողջական ուսումնասիրութեան: Այս դիտարկումին ընդգրկած ենք արձանագրութիւն, թուական կամ կնիք չունեցող նմուշները եւս, չնշելով անոնց չափագրութիւնը:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Կարմիր եւ դեղին պղնձաթերթէ պատրաստուած այս կաամանները - ոմանք կլայուած - ձեւով ելակէտային նմանութիւններ ունենալով հանդերձ ունին էական տարբերութիւններ, որոնք կը վերաբերին ձեւին, ծաւալին եւ նախշերուն: Բոլորը ունին միակեդրոն շրջագիծեր, որոնք թէ՛ որոշ յարդարանք կու տան նմուշին, թէ՛ կը ծառայեն անոր համաչափ ձեւաւորման:

Այս տիպին ոչ բոլոր հատուածներուն պատրաստութիւնը կարիքն ունի մեծ վարպետութեան: Արհեստաւորին ճարտարութիւնը կը դրսեւորուի գլխաւորաբար իրանին, ինչպէս նաեւ վիզին վեր բարձրացող հատուածին գոգաւորութեան/ուռուցիկութեան մէջ: Անոր գեղագիտական ճաշակը կը կայանայ իր համաչափութեան մէջ: Գեղագիտական այս տուեալին կու գան աւելնալ երբեմն շուրջբոլոր (կամ մասամբ) կատարուած նախշերը՝ վիզին կամ յատակին մօտ, գեղեցիկ նախշաւորուած վահանակներու մէջ զետեղուած արձանագրութիւնները եւն.: Կիրակոսեան կը նկարագրէ անոնց պատրաստման եղանակը՝ «կռում, ծեծում, փորագրում, անագապատում»¹⁰:



Տարատեսակ 1, 2 եւ 3ի արտաքին գծանկարը

դափոխուած Պէյրութ (Vartan Derounian, *Alep et ses environs*, [հայերէն, արաբերէն եւ ֆրանսերէն հրատարակութիւն, ներածութիւն՝ Վարդի Քէշիշեան եւ Աստղիկ Չամքերթէ], Nareg publications, Aleppo, 2006, էջ 51):

¹⁰ Կիրակոսեան, էջ 180:

Համապարփակ աղյուսակ բաղկիքի պշնձեայ կառավարմանը և երեք տարատեսակներու						
Թիւ	Արձանագրութիւն/ Կիիք	Չափեր	Նախշեր	Գոյն	Տարի	
Տարատեսակ 1						
1, ՍՀ1	Կիիք՝ ՆԵՐՄԵՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԵՄԻՆԱՆ	825կր., հսկ.՝ 17,5սմ, տրոգծ.՝ 16,5սմ վեր, 19սմ յոյւ.	Զուկի	Դեղին	Զուկի	
2, ՍՍ1		Զուկի				
3, ՍՍ2	Արծ.՝ ԳԱՆԵՏԵԱՐԵԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՇԱՐ	823կր., հսկ.՝ 17,5սմ, տրոգծ.՝ 16սմ վեր, 19,5 հատթւն.՝ 1,5սմ	Կիզին շուրջըրոր կրկնուող մեկ շարք			
4, ՍՍ3	Երկու տարբեր կիիք՝ ա) Յ. Կ. ԱՍԼԱՆԵԱՆ, բ) ՆԵԱՆ ԿԵՐՈՑԵԱՆ	685կր., հսկ.՝ 17սմ, տրոգծ.՝ 15սմ վեր, 18սմ յոյւ.		Կարմիր	Զուկի	
5, ԵՊԹ5	Զուկի	Տուեալներ չունիք				
6, ՀԹ1	Կիիք՝ ՆԵՐՄԵՍ ԱՍԼԱՆԵԱՆ	հսկ.՝ 20սմ, տրոգծ.՝ 18սմ վեր, 19սմ յոյւ.				
7, ՀԹ2	Կիիք՝ ԵՄԻՆԱՆ ԳԱՆԵՏԵԱՆ	հսկ.՝ 26սմ, տրոգծ.՝ 25,5 վեր, 29սմ յոյւ.		Դեղին	1957	
8, ՀԹ3	Արծ.՝ Զ. ՄԻՐՈՒԿԵԱՆ 1957[.]9[.]22	հսկ.՝ 18,5սմ, տրոգծ.՝ 17սմ վեր, 18սմ յոյւ.	Զուկի			
9, ՀՀ2	Արծ.՝ ԵՐԻԱԲԵԹԻ	շուրջ 200կր., հսկ.՝ 11,5, տրոգծ.՝ 10սմ վեր, 12սմ յոյւ.		Զուկի		
10, ԱՀԹ1	Կիիք՝ ԵՄԻՆԱՆ ԳԱՆԵՏԵԱՆ [ՍԱՐԳԻՍ ԶԵՄԵՐՈՐԵԱՆ]		Կիզին շուրջըրոր գիծեր	Զուկի	Շուրջ 1900ականներ	
11, ԱՀԹ2	Արծ.՝ ՆԱԶԱՐԻԱՆ 1885			Կարմիր		
12, ԱՀԹ3		Տուեալներ չունիք				
13, ՍԱԹ6	Զուկի	Զուկի	Զուկի	Կարմիր	Զուկի	
14, ԱՍ4	Կիիք՝ ԵՄԻՆԱՆ ԳԱՆԵՏԵԱՆ [ԿԱՐՄԵՆԱՆ ԱՐՄԱՆԵԱՆ]	686կր., հսկ.՝ 17,2սմ, տրոգծ.՝ 15սմ վեր, 18,5սմ յոյւ., հատթւն՝ 0,7սմ	Կիզին շուրջըրոր 4 գիծեր		1930	
15, ԱՍ5	Կիիք՝ ԵՄԻՆԱՆ ԳԱՆԵՏԵԱՆ	626կր., հսկ.՝ 16սմ, տրոգծ.՝ 15սմ վեր, 16,5սմ յոյւ., հատթւն.՝ 1սմ	Կիզին շուրջըրոր կրկնուող նախշեր, եւ 4 գիծեր, իսկ յոյւ.էն քիչ վեր շուրջըրոր 6 գիծեր	Դեղին	Զուկի	
16, ԱՍ7	Կիիք՝ ԵՄԻՆԱՆ ԳԱՆԵՏԵԱՆ [ԱՐՄԱՆԵԱՆ]	622կր., հսկ.՝ 17,5սմ, տրոգծ.՝ 15սմ վեր, 18սմ յոյւ., հատթւն՝ 0,8սմ	Կիզին շուրջըրոր 6 գիծեր	Կարմիր		
17, ԱՍ8	Կիիք՝ ԵՄԻՆԱՆ ԳԱՆԵՏԵԱՆ [ԲԱՆԵԱՆ]	810կր., հսկ.՝ 18,5սմ, տրոգծ.՝ 14,5սմ վեր, 18,5սմ յոյւ., հատթւն.՝ 0,5սմ	Կիզին շուրջըրոր 2 գիծեր			
18, ԱՍ9	Կիիք՝ ԳԵՐՈՐԳ ԴԻՆԵՐԵԱՆ	522կր., հսկ.՝ 15սմ, տրոգծ.՝ 13սմ վեր, 14,5սմ յոյւ., հատթւն.՝ 0,8սմ	Կիզին շուրջըրոր կրկնուող նախշեր, 4 գիծեր, իսկ յոյւ.էն քիչ վեր շուրջըրոր երկու գիծ	Դեղին	Զուկի	
19, ԱՍ10	Անընթ. արաբատար կիիք		Կիզին շուրջըրոր կրկնուող նախշեր	Կարմիր		
20, ԱՍ11	Կիիք՝ ԴԵՐՈՐԱՆ ԱՐԵՐԵԱՆ	747կր., հսկ.՝ 18սմ, տրոգծ.՝ 13,5սմ վեր, 18սմ յոյւ., հատթւն.՝ 0,8սմ	Կիզին շուրջըրոր կրկնուող նախշեր, 2 ախտներ՝ 0,4սմ յայնքով, իսկ	Դեղին		

¹ Ըստ սեփականատիրոջ հետ մեր հարողակցութեան «շատ հաւանաբար փոքրիկ մը պատկանած, 1900ականներու»։ Գրուած է հայերէնով մեջ 2010ականներուն (հարողակցութիւն 26 Մայիս 2022)։

			Տոնեալներ չունիսք	յուկ.էն քիչ վեր շուրջըրորդ տոյնաման ալկոս		
21, US12	Երկու կիիք՝ ՅՈՎ ՊՕԾԿԵԶԷՆԵԱՆ 1940-جـ (Հաւել), իսկ երկրորդը շատ սման է US10ի քիիքին				Զունի	Կարմիր
22, US13	Կիիք՝ كوزك ارسلايتان		875կր., հսկ.՝ 19,5սմ, տրոնգծ.՝ 16սմ վեր, 20սմ յուկ., հատքն.՝ 1,2վմ	Վիզին շուրջըրոր կրկնուող 5 սախշեր՝ 1,2 սմ ալկոսի վր մեջ, որուն վարի սահմանը, շուրջըրոր դարձող դուրս ցցուած կիսակր դօտի մը, վիզին շուրջըրոր չորս գիծեր, նաեւ՝ յուկ.էն քիչ վեր՝ երկու գիծեր		1930
23, US14	Արծ.՝ Ծ.Խ.		166կր., հսկ.՝ 9սմ, տրոնգծ.՝ 8,8սմ վեր, 9սմ յուկ. հատքն.՝ 0,6վմ			Զունի
24, ՇՄ1	Կիիք՝ عمل يوسف دياركي [ԵՈՒՄԵՖ ՏԻՄԴԻԵՔԻՐԻՒԻ ԱՇԽԱՍԱՆՔ]		հսկ.՝ 14սմ, տրոնգծ.՝ 18սմ վեր, 19սմ յուկ.			
25, ՎԱ1 ²	Արծ.՝ Շաքէ Ե. Դօլմեան ծնաւ. 1896ին.տրոնք. 27ին ուրբաթ օրը ժամը 6.ու.1/2ին զայս նովորեաց մեյթոն գազանճանը որ շինեց 1897ին. փետ. 1ին		291կր., հսկ.՝ 11,5սմ, տրոնգծ.՝ 12,5սմ, հատքն.՝ շուրջ 1վմ		Զունի	1897
26, ՍԹ2	Արծ.՝ Սաքա-Հանիֆի, 1312			Վիզին մօտ շուրջըրոր 4 գիծ		Զունի
Տարաւեասկ 2						
1, ԱՄ1 ³	Զունի		շուրջ 825կր., հսկ.՝ 16սմ, տրոնգծ.՝ 18սմ վեր, 21 յուկ.	Զունի		
2, ԵՊԹ1	Կիիք՝ ՄԺ			Շուրջըրոր կրկնուող կամարաման սախշեր վիզին տակ, եւ՝ յուկ.էն վեր դէպի դուրս եւ շուրջըրոր դարձող երկու ցցուած կիսակր դօտիներու միջեւ	Կարմիր	չունի
3, ԵՊԹ2	Կիիք՝ «Մ[եւ անընթ. տառ մը]»			Շուրջըրոր կրկնուող կամարաման սախշեր վիզին տակ		չունի
4, ԵՊԹ3						չունի
5, ԵՊԹ4	Զունի					չունի
6, ՁԹ1	Կիիք՝ Զ.Գ.					1914
7-15, ԱՄԹ1-3,				Զունի		
			Տոնեալներ չունիսք			

² Անձնական սամակագրութիւն 15 Օգոստոս 2022: Կրժ Լրմէն Լրթիւեան, «Ճակատագիր», Ուտայն 2, տպարան կաթողիկոսութեան հայոց մեծի տանն Կիլիկիոյ, Մնթիլիս, 1988, էջ 113-119: Պատմութեան խառնուրդը խառնուրդը 1965ին, ապա ընդգրկուած գիրքին մեջ:

³ «Տատիկս այն ունեցել է 1952 թուականից: Մայրիկիս տատիկին է եղել: Երեւի հենց Լեւոնականում էլ են արտադրել: Նախշերը ամբողջ շրջանով են» (հարցըրդակցութիւն 26 Մայիս 2022):

Իրենց ընդհանրական ձեւին մէջ, այս տիպին մեծերը կը յիշեցնեն ճիւղաւորի կաթսաները, իսկ փոքրերը՝ կաթի դոյլերը: Առկայ օրինակներէն ու տարբերակներէն կարելի է հետեւեցնել որ այս տիպը անցած է ձեւաւորման բաւական երկար ճամփայ, հոսակ, հանգրուանած գլխաւոր 2-3 տարատեսակներու վրայ: Մեկնելով առկայ նմուշներէն, կը թուի թէ այս տիպի երեք տարատեսակ առաւել ընդհանրական կենցաղավարութիւն ունեցած է:

Ատորեւ կ'անդրադառնանք անոնց:

Տարատեսակ 1.- այս նմուշները պատրաստուած են ճարտարարուեստականացած պղնձեայ ողորկ ու հարթ, կլոր թերթերէ¹¹: Ասոնք ունին կլոր, ողորկ (երբեմն թեթեւ թեքութեամբ) յատակ, ուրկէ վեր բարձրացող հատուածը՝ իրանը, յատակին ներքին հարթակին համեմատ գոյացնելով շուրջ 60 աստիճան թեքութիւն (դէպի ներս), կը կազմէ կոնաձեւ (տակաւ նեղցող) 'գաւաթ' մը: Նեղցող գաւաթին վերի տրամագիծը երբ կը հասնի յատակի տրամագիծին 2/3րդ համեմատական չափին, կը գոյացնէ վիզ մը, որ ապա կը բարձրանայ թեքելով եւ ծաւալելով դէպի դուրս: Երբ բարձրացող եւ դէպի դուրս բացուող հատուածին տրամագիծը գրեթէ հաւասարի յատակի տրամագիծին, ան կ'առնէ հորիզոնական ուղղութիւն ապա կ'իջնէ վար:

Տարատեսակ 2.- այս նմուշները պատրաստուած են թէ՛ ճարտարարուեստականացած պղնձեայ ողորկ ու հարթ, կլոր եւ թէ՛ չճարտարարուեստականացած թերթերէ: Տարատեսակ 1էն ասոնք ունին հետեւեալ տարբերութիւնները.- ա) չափով աւելի փոքր են, բ) իրանի բաժինը թեթեւ փորիկութիւն մը ունի, գ) յատակը ողորկ չէ, այլ՝ ուշագրաւօրէն կոր, դ) իրանէն վիզ անցնող հատուածը չունի տարատեսակ 1ի գեղագիտական նրբութիւնը:

Տարատեսակ 3.- այս նմուշները պատրաստուած են ճարտարարուեստականացած պղնձեայ ողորկ ու հարթ, կլոր թերթերէ: Ասոնք ունին հետեւեալ յատկանիշները.- ա) չափով աւելի մեծ են, բ) ոմանք հարուստ են նախշերով (ուրիշներ չունին նախշեր), գ) ոմանց իրանի բաժինը ունի թեթեւ գոգաւորութիւն, ուրիշներունը՝ թեթեւ փորիկութիւն. ոմանք ունին հարթ իրաններ, դ) ոմանց յատակը ողորկ է, ոմանցը՝ թեթեւակիօրէն կոր, ե) գրեթէ վիզ չունին, գ) յատակին ներքին հարթակին համեմատ իրանը ունի տարբեր թեքութիւններ՝ շուրջ 60էն մինչեւ 80 աստիճան, է) ի տարբերութիւն նախորդ երկու տարատեսակներուն (որոնց նմուշները – իրենց տարատեսակին մէջ – մանրամասնային քիչ տարբերութիւն ունին), տարատեսակ 3ի նմուշները իրենց մանրամասնութիւններուն մէջ այլազան են: Տարատեսակ 3ին ձեւի, չափի ու նախշերու այլազանութիւնը ենթադրել կու տայ որ ան ու-

¹¹ Քիչ պարագաներու կը հանդիպինք արհեստանոցի թերթերու:

նեցած է այլազան կիրառություններ՝ բաղնիքի կալի ընտանեկան (կամ մեծաքանակ պահեստի) գործածությունն էն, մինչեւ կաթսայի գործառույթ¹²:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամերիկայի հայկական թանգարան (ԱՀԹ-1-7)

ԱՀԹ-1ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ, չունի արձանագրութիւն, նախշ, թուական: Ունի կնիք՝ «سرکيس جمبرجيان» (ՍԱՐԳԻՍ ԶԵՄՊԵՐՃԵԱՆ):

ԱՀԹ-2ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ, ունի արձանագրութիւն եւ թուական՝ «ՆԱԶԱՐԻԱՆ 1885», չունի նախշ, կնիք:

ԱՀԹ-3ը կը պատկանի տարատեսակ 1ին¹³:

ԱՀԹ-4ը կը պատկանի տարատեսակ 3ին պատրաստուած է կարմիր պղինձէ, ունի արձանագրութիւն եւ թուական՝ «ԶԱՐՄԱՆ ՊԱՐՊԱՐԵԱՆ 1914»: Չունի կնիք, ունի գծային նախշեր, արձանագրութիւնը տեղաւորուած է զարդանախշ-վահանակի մէջ: Յատակը թեթեւ կլորութիւն ունի, իրանը՝ թեթեւ գոգաւորութիւն մ:

ԱՀԹ-5ը կը պատկանի տարատեսակ 3ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, ունի արձանագրութիւն, թուական՝ «ՈՎՍԱՆՆԱ ՖԱՐԻՆԵԱՆ 1906»: Չունի կնիք, ունի գծային եւ երկրաչափական նախշեր, արձանագրութիւնը տեղաւորուած է զարդանախշ-վահանակի մէջ: Յատակը տափակ է, իրանը՝ ողորկ ու հարթ:

ԱՀԹ-6ը կը պատկանի տարատեսակ 3ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, ունի արձանագրութիւն, թուական՝ «ԳՐԵԱԳԶԻ ՈՐԴԻ ՀԾԻ ԼՈՒՍԻԱՅ 1908»: Չունի կնիք, նախշեր, արձանագրութիւնը տեղաւորուած է զարդանախշ-վահանակի մէջ: Յատակը տափակ է, իրանը՝ թեթեւ գոգաւորութիւն ունի:

ԱՀԹ-7ը կը պատկանի տարատեսակ 3ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, ունի արձանագրութիւն եւ թուական՝ «ՀԱՅԿԱՆՈՒՇ ԳԷԱԶԻԵԱՆ 1908»: Չունի կնիք, նախշեր, արձանագրութիւնը տեղաւորուած է զարդանախշ-վահանակի մէջ: Յատակը թեթեւ կլորութիւն ունի, իրանը՝ թեթեւ գոգաւորութիւն:

Անծանօթ (Անծ.1-2)

Անծ.1ը կը պատկանի տարատեսակ 3ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք: Ունի շուրջըլոր նախշուած

¹² Լիբանանի Պեքաայի շրջանի Թըրպոլ գիւղի ազգագրական թանգարանին մէջ հանդիպեցանք տարատեսակ 1 ցուցանմուշին, որ ըստ տրուած բացատրութեան կը գործածուէր կաթ տաքցնելու համար (անձնական զրոյց, 12 Յուլիս 2023): Կիրակոսեան զանոնք կը կոչէ բաղնիքի ջրաման (էջ 180):

¹³ Թեքնիք պատճառներով անկարելի եղաւ անելի բան գրել այս նմուշին մասին:

հինգ գօտի, որոնց երկրորդն ու չորրորդը կրկնուող նոյն նախշերն ունին, մինչ առաջինն ու հինգերորդը ունին իրարմէ տարբեր, կրկնուող նախշեր: Երրորդ գօտին անհամեմատ լայն է, ունի կրկնուող այլ նախշ մը: Յատակը հարթ է, իրանը՝ թեթեւ գոգաւորութիւն ունի:

Անծ.2ը կը պատկանի տարատեսակ 3ին պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք: Ունի շուրջբոլոր նախշուած վեց գօտի, որոնց առաջինը կը կրկնէ 6րդին նախշը, երկրորդը՝ 5րդինը: Երրորդ եւ չորրորդ գօտիները անհամեմատ լայն են եւ ունին կրկնուող նախշ մը: Յատակը հարթ է, իրանը ունի թեթեւ գոգաւորութիւն:

Երեւանի պալմութեան թանգարան (ԵՊԹ-5)

ԵՊԹ1ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական: Ունի կնիք՝ «ՄԺ», շուրջբոլոր կրկնուող կամարանման նախշեր վիզին տակ եւ երկրորդ մը՝ յատակէն վեր եւ շուրջբոլոր ցցուած երկու կիսակլոր գօտիներու միջեւ: Իրանը ողորկ է ու հարթ:

ԵՊԹ2ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական: Ունի կնիք՝ «Մ[եւ անընթ. տառ մը]»: Ունի շուրջբոլոր կրկնուող կամարանման նախշեր վիզին տակ, եւ յատակէն վեր դէպի դուրս ու շուրջբոլոր ցցուած երկու կիսակլոր գօտիներ: Յատակը կլոր է, իրանը ողորկ է ու հարթ:

ԵՊԹ3ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք, նախշեր: Յատակը կլոր է, իրանը ունի որոշ գոգաւորութիւն:

ԵՊԹ4ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք, նախշեր: Ունի յատակէն վեր եւ շուրջբոլոր ցցուած երկու կիսակլոր գօտիներ: Յատակը կլոր է, իրանը ողորկ է ու հարթ:

ԵՊԹ5ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք, նախշեր:

Հրազդան Թորմաճեանի հաւաքածոյ (ՀԹ-3)

ՀԹ1ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական եւ նախշեր: Ունի կնիք՝ «ՆԵՐՍԷՍ ԱՍԼԱՆԵԱՆ»:

ՀԹ2ը կը պատկանի տարատեսակ 1ին, իրանը ունի թեթեւ գոգաւորութիւն, պատրաստուած է կարմիր պղինձէ, ունի վիզին շուրջբոլոր կրկնուող նախշեր, կնիք՝ «يوسف فستقجيان عيتتاب» (ԵՌԻՍԷՖ ՖՍԹԸՔՃԵԱՆ ԱՅՆԹԱՊ):

ՀԹ3ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ, ունի արձանագրութիւն եւ թուական՝ «2. Մկրտիչեան 1957[,] 9[,] 22» եւ կենդանակերպ նախշ մը:

Յովհաննէս Շարամբէեանի անուան ժողովրդական արուեստներու թանգարան (ԺԱԹ1)

ԺԱԹ1ը կը պատկանի տարատեսակ 3ին, պատրաստուած է դեղին պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, նախշ ու կնիք: Չափերով աւելի լայն է, իրանը յատակին ներքին հարթակին համեմատ կը գոյացնէ շուրջ 80 աստիճան թեքութիւն, իսկ վիզի կտրուածքը աւելի նախնական մշակում ունի:

Հայաստանի պարմութեան թանգարան (ՀՊԹ1-2)¹⁴

ՀՊԹ1ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, արձանագրութիւն, թուական, կնիք, նախշեր չունի: Ունի յատակէն վեր եւ շուրջբոլոր երկու ցցուած կիսակլոր գօտի: Ըստ Կիրակոսեանի, ան ԺԹ. դարավերջի Ալեքսանդրապոլի արտադրութիւն է:

ՀՊԹ2ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, արձանագրութիւն, թուական, կնիք, նախշեր չունի: Ունի յատակէն վեր եւ շուրջբոլոր երկու կիսակլոր ցցուած գօտի: Ըստ Կիրակոսեանի, ան ԺԹ. դարավերջի Ալեքսանդրապոլի արտադրութիւն է:

Սերժ Հաքիմեան (ՍՀ1)

ՍՀ1ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ, չունի թուական, արձանագրութիւն, նախշեր, կնքուած է՝ «ՆԵՐՍԷՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ عيسى» [ԱՅՆԹԱՊ]: Իրանին տարբեր մասերուն շուրջբոլորը կան 9-10 գիծեր:

Հիւմիա Հիւմի հաւաքածոյ (ՀՀ1)

ՀՀ1ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ, արձանագրութիւնը թասին շրթունքին է՝ «ԵՂԻՍԱԲԵԹ», չունի թուական, նախշեր, «շատ հաւանաբար շինուած փոքրիկի մը համար, շուրջ 1900ին», գնուած է Իսթանպուլի մէջ 2010ին¹⁵:

Ձիթողեանց թանգարան, Գիւմրի (ՁԹ1)

ՁԹ1ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, ունի երկու սկզբնատառ՝ «Հ.Գ.» եւ թուական՝ «1914», երկուքն ալ նոյն վահանակին մէջ առնուած: Չունի նախշեր, յատակը կիսակլոր է, իրանը հարթ-ողորկ: Ունի յատակէն վեր եւ շուրջբոլոր ցցուած երկու կիսակլոր գօտիներ:

¹⁴ Այս երկու նմուշներուն տուեալները կը քաղենք Կիրակոսեանի հատորէն, օգտուելով նաեւ նկարներէն:

¹⁵ Ելնամակային հաղորդակցութիւն 26 Մայիս 2022:

Աննա Մանուկեան (ԱՄ1)¹⁶

ԱՄ1ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք: Վիզին մօտ ունի շուրջբոլոր կամարանման կրկնուող նախշ: Իրանը թեթեւ ուռուցիկութիւն մը ունի եւ՝ շուրջբոլոր ggուած երկու կիսակլոր գօտի:

Շողեր Մարկոսեան (ՇՄ1)¹⁷

ՇՄ1ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է հաւանաբար կարմիր պղինձէ: Չունի արձանագրութիւն, թուական: Ունի արաբատառ կնիք՝ «يوسف ديار بكرلي» (ԵՈՒՍԷՖ ՏԻԱՐՊԵՔԻՐԼԻ): Ունի վիզին մօտ շուրջբոլոր նախշ, կնիքը զետեղուած է նախշուած վահանակի մէջ:

Մոսիկ Պարսումեան (ՄՊ1)

ՄՊ1ը կը պատկանի տարատեսակ 3ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, ունի կրկնուող արձանագրութիւն եւ թուական՝ «ՄԱՐԻԵԱՄ ԳԱԶԱՆԺԻԵԱՆ 1895», շուրջբոլոր գծային եւ խոյականման նախշեր, չունի կնիք: Իրանը, յատակին ներքին հարթակին համեմատ կը գոյացնէ շուրջ 80 աստիճան թեքութիւն՝ դէպի ներս:

Սասուն Սիմոնեանի հաւաքածոյ (ՍՍ1-5)

ՍՍ1ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք, ունի նախշեր վիզին շուրջ, ինչպէս նաեւ շուրջբոլոր գիծեր:

ՍՍ2ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական: Ունի կնիք՝ «ԳԱԼԵՄՔԵԱՐԵԱՆ ԵՂԲԱՐՔ ՇԱՄ», կրկնուող նախշեր՝ վիզին շուրջ, ինչպէս նաեւ շուրջբոլոր գիծեր:

ՍՍ3ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ, չունի արձանագրութիւն: Ունի երկու տարբեր կնիքներ՝ «Յ. Կ. ԱՍԼԱՆԵԱՆ» եւ «ՆՇԱՆ ԿԵՑՈՅԵԱՆ», կրկնուող նախշեր վիզին շուրջ, ինչպէս նաեւ շուրջբոլոր գիծեր:

ՍՍ4ը կը պատկանի տարատեսակ 3ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք, ունի համատարած սիրուն կրկնուող նախշեր: Իրանը ունի որոշ գոգատրութիւն:

¹⁶ Հաղորդակցութիւն Աննա Մանուկեանի հետ, Երեւան, Մայիս 2022:

¹⁷ Համացանցի «Յուշամատեն» (<https://images.app.goo.gl/whVmB4hkLbWeDKfk9>) կայքէջին վրայ հանդիպելով պղնձեղէններու նկարի մը հաղորդակցեցանք (22 Օգոստոս 1922-14 Յուլիս 1923) անոնց սեփականատէր Շողեր Մարկոսեանին հետ, որմէ քաղեցինք վերոյիշեալ տուեալներն ու չափագրութիւնը, որոնց համար շնորհակալ ենք իրեն:

ՍՍ5ը կը պատկանի տարատեսակ 3ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, ունի արձանագրութիւն եւ թուական՝ «ՀԱՃԻ ԵՒԱ ԵՐԷՏ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ 1895», շուրջըլոր գծային եւ խոյականման նախշեր: Չունի կնիք: ՍՍ4ին նման ունի որոշ գոգաւորութիւն, սակայն կը տարբերի անկէ ու ՍՍ1-3էն նաեւ՝ համաչափութեամբ: Ասոր գոգաւորութեան, յատակի ու բերանի չափերը չունին ՍՍ1-4ի համաչափական նրբութիւնը:

Սարդարապատի ազգագրութեան թանգարան (ՍԱԹ-13)

ՍԱԹ1ը կը պատկանի տարատեսակ 2ին պատրաստուած է դեղին պղինձէ, չունի արձանագրութիւն, կնիք, թուական: Ունի վիզին շուրջըլոր կրկնուող նախշ, յատակը հարթ չէ: Յատակէն քիչ վեր ունի շուրջըլոր ցցուած երկու գօտի:

ՍԱԹ2ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ: Ունի վիզին շուրջըլոր կրկնուող նախշ, չունի արձանագրութիւն, կնիք, թուական. յատակը հարթ չէ: Յատակէն քիչ վեր ունի շուրջըլոր, ցցուած երկու գօտի: Իրանը ունի թեթեւ գոգաւորութիւն:

ՍԱԹ3ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ: Ունի վիզին մօտ նախշ մը, չունի կնիք, արձանագրութիւն, թուական. յատակը կոր է: Յատակէն քիչ վեր ունի շուրջըլոր ցցուած երկու գօտի: Իրանը ունի թեթեւ գոգաւորութիւն:

ՍԱԹ4ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի նախշեր, թուական. ունի արձանագրութիւն՝ «Ի Օ» եւ «ՀՕ»: Յատակէն քիչ վեր ունի շուրջըլոր ցցուած երկու գօտի: Իրանը հարթ ու ուղորկ է, յատակը՝ կոր:

ՍԱԹ5ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի նախշեր, արձանագրութիւն, թուական, կնիք: Յատակէն քիչ վեր ունի շուրջըլոր ցցուած երկու գօտի: Իրանը ունի թեթեւ գոգաւորութիւն, յատակը կոր է:

ՍԱԹ 6ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք, նախշեր:

ՍԱԹ7ը կը պատկանի տարատեսակ 3ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, յատակը տափակ է, իրանը՝ հարթ ու ողորկ, յատակէն քիչ վեր ունի շուրջըլոր ցցուած երկու գօտի: Չունի արձանագրութիւն, կնիք, թուական, նախշեր:

ՍԱԹ 8ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, ունի անընթեռնելի կնիք, չունի նախշեր, արձանագրութիւն, թուական. իրանը հարթ ու ողորկ է, յատակէն քիչ վեր ունի շուրջըլոր ցցուած երկու գօտի, յատակը կոր է:

ՍԱԹ 9ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք: Իրանը հարթ եւ ողորկ է, յատակէն քիչ վեր ունի շուրջըլոր ցցուած երկու գօտի, յատակը կոր է:

ՍԱԹ 10ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք: Իրանը հարթ եւ ողորկ է, յատակէն քիչ վեր ունի շուրջբոլոր ցցուած երկու գօտի, յատակը կոր է: ՍԱԹ 11ը կը պատկանի տարատեսակ 3ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք: Իրանը թեթեւ գոգաւորութիւն ունի, յատակէն քիչ վեր ունի շուրջբոլոր ցցուած երկու գօտի, յատակը կոր է:

ՍԱԹ 12ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք: Իրանը հարթ եւ ողորկ է, յատակէն քիչ վեր ունի շուրջբոլոր ցցուած երկու գօտի, յատակը կոր է:

ՍԱԹ 13ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք: Իրանը հարթ եւ ողորկ է, յատակէն քիչ վեր ունի շուրջբոլոր ցցուած երկու գօտի, յատակը կոր է:

Սուրբ Փրկիչ ամսագրի լուսանկարներ (ՍՓ1-3)¹⁸

ՍՓ1ը կը պատկանի տարատեսակ 3ին, պատրաստուած է դեղին պղինձէ, ունի արձանագրութիւն, թուական՝ «Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ԲԸՐԱԲԻՕՆ ՌՄԻ [1771]»: Ունի երկրորդ թուական՝ «1205 [=1791]», կնիք չունի: Արձանագրութիւնը տեղաւորուած է իւրօրինակ վահանակ-նախշի մէջ: Ունի շուրջբոլոր գիծեր: Ըստ նկարին ենթագրութեան, ան բաղնիքի կաթսայ է:

ՍՓ2ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, ըստ նկարի ենթագրութեան, ունի արձանագրութիւն՝ «Սաքա Հանիֆի, 1312», որ գետեղուած է վահանակի մէջ, վիզին վրայ: Չունի նախշեր, այլ շուրջբոլոր 4 գիծ, վիզին մօտ:

ՍՓ3ը կը պատկանի տարատեսակ 3ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, ըստ նկարի ենթագրութեան, ունի արձանագրութիւն՝ «Սեփտէ¹⁹ 1166 [=1752]», իբրեւ բացատրութիւն աւելցուած է թէ ան Եդոկիոյ (Թոքթաթ) կամ Սեբաստիոյ գործ է: Արձանագրութիւնը կը գտնուի կաամանին վերնամասին ներքին կողմը: Հարուստ է նախշերով: Ձեւով, չափով ու նախշերով շատ նման է ԱՏ1ին:

Վրէժ Արմէն (ՎԱ1)²⁰

ՎԱ1ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, ունի արձանագրութիւն եւ թուական՝ «Շաքէ Ե. Հօսիւեան ծնաւ 1896ին. նոյեմբ. 27ին ուրբաթ օրը ժամը 6.ու¹/₂ին զայս նուիրեաց Մելքոն Գազանճ-

¹⁸ Այս երեք նմուշներուն տուեալները կը քաղենք նկարներուն ենթագրութենէն, օգտուելով նաեւ նկարներէն:

¹⁹ Գուցէ Սէյտէ՞:

²⁰ Ելնամակային հաղորդակցութիւն 14 Օգոստոս 2022 եւ 14 Յուլիս 2023:

եանը որ շինեց 1897ին փետ. 1ին»։ Չունի կնիք։ Ունի շուրջբոլոր կրկնուող բուսանախշեր վիզին տակ եւ երկրորդ մը՝ յատակէն վեր։ Վրէժ Արմէն այս կաամանին մասին «Ճակատագիր» վերնագրեալ գեղարուեստական գրութիւն մը ստորագրած է *Յուսաբերի* 31 Դեկտեմբեր 1965ի թիւին մէջ, զոր յետագային ընդգրկած է իր *Ոսկայն* 2 հատորին մէջ, էջ 113-19 (Թորոնթօ 1988, լոյս տեսած Պէյրութ, մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան տպարանէն)։

Անդրանիկ Տազեսեանի հաւաքածոյ (ԱՏ1-14)²¹

ԱՏ1ը կը պատկանի տարատեսակ 3ին, բայց վիզի բաժինը չունի անոր կո-րութիւնը, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արծանագրութիւն, թուական, կնիք։ Իրանը հարուստ է համատարած երկգօտի երկու տարբեր նախշերու կրկնութիւնով։ Ունի նաեւ գծային նախշեր։ Շատ նման է ՍՓ2ին։ ԱՏ2ը կը պատկանի տարատեսակ 3ին պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արծանագրութիւն, թուական, նախշեր, այլ միջանի շուրջբոլոր գիծեր։ Ունի անընթեռնելի երեք օսմաներէն կնիք։ Յատակը կոր է, իրանը թեթեւ գոգաւորութիւն ունի։

ԱՏ3ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ, չունի արծանագրութիւն, թուական, նախշ, ունի կնիք՝ «ԱՍԼԱՆԵԱՆ ԵՂՔԱՐՔ»։

ԱՏ4ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ, չունի արծանագրութիւն։ Վզին մօտ ունի շուրջբոլոր կրկնուող նախշ։ Ունի կնիք եւ թուական՝ «ՆԵՐՍԷՍ ԱՍԼԱՆԵԱՆ 1930»։

ԱՏ5ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է կարմիր պղինձէ։ Չունի արծանագրութիւն, թուական, վզին մօտ ունի շուրջբոլոր կրկնուող նախշ։ Ունի կնիք՝ «بلايان» (ՊԱԼԱՊԱՆ)։

ԱՏ7ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ։ Չունի արծանագրութիւն, թուական, վզին մօտ ունի շուրջբոլոր կրկնուող նախշ։ Ունի կնիք՝ «ارسلان حلب» (ԱՐՍԼԱՆԵԱՆ ՀԱԼԷՊ)։

ԱՏ8ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ։ Չունի արծանագրութիւն, թուական, նախշ։ Ունի կնիք՝ «ԿԱՐԱՊԵՏ ԳԱՐՄԱՆԵԱՆ [եւ արաբերէն] حلب [ՀԱԼԷՊ]»։

ԱՏ9ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ։ Չունի արծանագրութիւն, թուական, վզին մօտ ունի շուրջբոլոր կրկնուող նախշ։ Ունի կնիք՝ «ԳԵՈՐԳ ՊԻԼԵՄՃԵԱՆ»։

ԱՏ10ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ։ Չունի արծանագրութիւն, թուական, վզին մօտ ունի շուրջբոլոր կրկնուող նախշ։ Ունի անընթեռնելի արաբատառ կնիք, որ շատ նման է ԱՏ12ի երկ-րորդ, արաբատառ կնիքին։

²¹ Թեքնիք պատճառներով զանց ըրինք ԱՏ6ը։

ԱՏ11ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ: Չունի արձանագրութիւն, թուական, վզին մօտ ունի շուրջբոլոր կրկնուող նախշ: Ունի կնիք՝ «ՊԵՏՐՈՍ ԱՐԸՃԵԱՆ»:

ԱՏ12ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է կարմիր պղինձէ: Չունի արձանագրութիւն, վզին մօտ ունի շուրջբոլոր կրկնուող նախշ: Ունի երկու կնիք եւ թուական՝ «ՅՈՎ ՊՕՇԿԷԶԷՆԵԱՆ 1940 حلب [ՀԱԼԷՊ]» Երկրորդ կնիքը արաբատառ է եւ անընթեռնելի, շատ նման ԱՏ10ի կնիքին: ԱՏ13ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է կարմիր պղինձէ: Չունի արձանագրութիւն, վզին մօտ ունի շուրջբոլոր կրկնուող նախշ: Ունի արաբատառ կնիք, որուն առաջին անունը հաւանաբար Պարգեւ է՝ «ارسلاڤيان» (ԱՐՍԼԱՆԵԱՆ):

ԱՏ14ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի նախշ, կնիք, թուական: Ունի արձանագրութիւն՝ «Ծ.Խ.»:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՏՆԱՆՇՈՒՄՆԵՐ

Մեկնելով վերոյիշեալ նկարագրութիւններէն կարելի է հետեւեցնել.-

- 1) Տարատեսակ 1ի նմուշներուն բացարձակ մեծամասնութիւնը արձանագրութիւն, թուական չունի, ունի կնիք, պատրաստուած է դեղին (երբեմն կարմիր) ճարտարարուեստականացած պղինձի թերթէ, ուշագրաւ նրբութիւն ունի թէ՛ ճարտար կատարումով եւ թէ՛ ձեւի առումով իր համաչափութեամբ:
- 2) Տարատեսակ 2ի նմուշներուն բացարձակ մեծամասնութիւնը արձանագրութիւն, թուական, կնիք չունի, պատրաստուած է կարմիր պղինձէ, նրբաճաշակութեամբ կը զիջի տարատեսակ 1ին, մեծմասամբ պատրաստուած չէ ճարտարարուեստականացած մետաղաթերթէ:
- 3) Տարատեսակ 3ի նմուշները չափերով ամենամեծն են: Ձեւի առումով իրարմէ կը զանազանուին իրենց մանրամասնութիւններով, հաւանաբար եւ կիրառութեամբ ու գործառնոյթով, հարուատ են շուրջբոլոր նախշերով, որոշ տեսականի մը կը զատորոշուի թուականակիր եւ անուանակիր արձանագրութեամբ, բոլորն ալ անկնիք են, բոլորը պատրաստուած են կարմիր պղինձէ, նրբաճաշակութեամբ կը զիջին տարատեսակ 1ին, բայց կը գերազանցեն տարատեսակ 2ը, պատրաստուած են ճարտարարուեստականացած մետաղաթերթէ: Տարատեսակ 3ին մէջ կան նմուշներ, որոնք շատ հաւանաբար նոյն արհեստանոցի արտադրութիւն են:
- 4) Բոլոր արձանագրութիւնները կը վերաբերին իգական անձնանուններու, ինչ որ կը հաստատէ թէ ասոնք - մանաւանդ տարատեսակ 3ը - իգական գործածութեան համար եղած են եւ պատկանած նմուշներուն վրայ արձանագրուած անուանատէրերուն: Ենթադրելի է որ անոնց պատուիրա-տունները եղած ըլլան անուանատէրերուն ծնողքը կամ հարազատը, կամ նոյնինքն անուանատէրը: Թուականի գոյութիւնը

ենթադրել կու տայ որ անոնք ծնունդն են անուանատիրոջ կեանքին անկինադարձային դէպքի մը (ծնունդ, մկրտութիւն, տարեդարձ, օժիտ են.) կամ առիթի մը: Տա-րատեսակ 1ի քիչ նմուշներուն արձանագրութենէն եա կարելի պէտք է ըլլայ հետեւցնել, թէ ասոնք նոյնպէս ունեցած են իգական սեռի կիրառութիւն:

ԱՐՇԵՍՏԱԻՈՐ, ՎԱՅՐ, ԺԱՄԱՆԱԿ, ԹԱՍԻ ՏԷՐ ՈՒ ՉԱՓԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարաբնակ 1

Արձանագրութիւն-կնիքներ.- Յ. Կ. ԱՍԼԱՆԵԱՆ, ՆԵՐՍԷՍ ԱՍԼԱՆԵԱՆ, ՊԵՏՐՈՍ ԱՐԸՃԵԱՆ, ԱՐՍԼԱՆԵԱՆ ՀԱԼԷՊ (արաբատառ), ԳԵՈՐԳ ԱՐՍԼԱՆԵԱՆ, ԿԱՐԱՊԵՏ ԱՐՍԼԱՆԵԱՆ (արաբատառ), ՄԵԼՔՈՆ ԳԱԶԱՆԾԵԱՆ, ԳԱԼԵՄՔԵԱՐԵԱՆ ԵՂԲԱՐՔ, ԿԱՐԱՊԵՏ ԳԱՐՄԱՆԵԱՆ, ՆՇԱՆ ԿԵՅՈՅԵԱՆ, ՆԵՐՍԷՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ, Զ. ՄԿՐՏԻՉԵԱՆ ՍԱՐԳԻՍ ՉԵՄՊԵՐԾԵԱՆ (արաբատառ), ՊԱԼԱՊԱՆ (արաբատառ), ԳԵՈՐԳ ՊԻԼԵՄՃԵԱՆ, ՅՈՎ ՊՕՇԿԷԶԵՆԵԱՆ, ԵՈՒՍԷՖ ՏԻԱՐՊԵՔԻՐԼԻ (արաբատառ):

Տէր.- ԵՂԻՍԱԲԵԹ, Զ. ՄԿՐՏԻՉԵԱՆ, ՆԱԶԱՐԻԱՆ, ՇԱՔԷ ՀՕՏԷԱՆ, ՍԱՔԱ ՀԱՆԻՖԻ:

Թուականներ.- 1312 (=1894), 1885, 1897, 1930, 1940, 1957:

Չափագրութիւն.- Ասոնք կը կշռեն 166-875 կրամ, ունին 9-25,5սմ հասակ, մետաղը ունի 0,7-1,6 մլմ հաստութիւն:

Վայրեր.- Այնթապ, Հալէպ, Շամ (Դամասկոս), Տիարպեքիր:

Այս տուեալներէն կրնանք հետեւցնել, թէ տարատեսակ 1ը կենցաղավարուած է 1870-80ականներէն մինչեւ 1950ականներու վերջ, իգական սեռին կողմէ: Ան կենցաղավարուած է Արեւմտեան Հայաստանի (հաւանաբար նաեւ Կիլիկիոյ) մէջ, ապա նաեւ՝ Հալէպի: Աւելի որոշակիօրէն ասոնց կը հանդիպինք Այնթապի, Դամասկոսի, Հալէպի եւ Տիարպեքիրի մէջ: Կողմնակի տուեալներէ կարելի է հետեւցնել նաեւ թէ ասոնք արտադրուած են Արեւմտեան Հայաստանի մէջ: Բազմաթիւ նմուշներ պահպանուած են Այնթապի եւ Հալէպի արհեստանոցներու արտադրութիւններէն:

Տարաբնակ 2

Արձանագրութիւն-կնիքներ.- ՄԺ, Մ?, հՕ, ՀՕ:

Տէր.- Ըստ բանաւոր վկայութեան՝ նմուշ մը պատկանած է իգական սեռին:

Թուականներ.- Ըստ Կիրակոսեանի՝ ԺԹ. դարավերջ, 1914, ըստ բանաւոր վկայութեան 1950ականներ:

Չափագրութիւն.- Ունինք միակ նմուշի մը չափագրութիւնը.- կշիռք՝ 825 կրամ, հասակ՝ 16 սմ:

Վայրեր.- Ըստ Կիրակոսեանի՝ Ալեքսանդրապոլ, ներկայիս Գիւմրի:

Դժբախտաբար տուեալները սակաւ են, որոնց հիմամբ ալ վերապահութեամբ կրնանք նշել, թէ ասոնք կենցաղավարուած են ԺԹ. դարավերջ-

1950ականներ շրջանին, Գիմրիի մէջ: Քանի որ նման նմուշներու չհանդիպեցանք արեւմտահայ-սփիւռքահայ միջավայրի մէջ, միւս կողմէ՝ Հայաստանի Հանրապետութեան վերոյիշեալ թանգարաններուն մէջ բազմաթիւ են այս տարատեսակին նմուշները, կարելի է հաստատել, թէ ասոնք կենցաղավարում են արեւելահայ իրականութեան մէջ:

Ի տարբերութիւն տարատեսակ 1ի նմուշներուն, այս տարատեսակի հազուադէպ օրինակներ ունին կնիք եւ արձանագրութիւն, եւ միակ մը՝ թուական: Պէտք է ընդգծել, սակայն որ այս տարատեսակին նմուշները չունին տարատեսակ 1ի չափագրական տարբերութիւնները:

Տարատեսակ 3

Նմուշները բազմազան են եւ բազմաչափ: Ոմանք ունին արձանագրութիւն եւ թուական: Կարելի է ենթադրել, որ այս տարատեսակէն տակաւ զարգացած է տարատեսակ 1ը որ սկսած է ունենալ յատուկ եւ մէկ գործառոյթ:

Արձանագրութիւն/Տէր.- ՄԱՐԻԵԱՄ ԳԱԶԱՆԾԻԵԱՆ, ՀԱՅԿԱՆՈՒՇ ԳԷԱԶԻԵԱՆ, ԳԸՐԵԱԳԶԻ ՈՐԴԻ ՀՃԻ ԼՈՒՍԻԱՅ, ՀԱՃԻ ԵԻԱ ԵՐԷՏ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, ԶԱՐՄԱՆ ՊԱՐՊԱՐԵԱՆ, Ի Վայելումն Պօղոսին է ԹՎ. ՌՃԼԸ, Սեփտէ, ՈՎՍԱՆՆԱ ՖԱՐԻՆԵԱՆ, «Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ԲԸՐԱԲԻՕՆ ՌՄԻ»:

Թուականներ.- ՌՃԼԸ (=1689), 1716, 1166 (=1752), ՌՄԻ/1205 (=1791), 1895, 1906, 1908, 1914:

Չափագրութիւն.- Ունինք միակ նմուշի մը չափագրութիւնը.- կշիռք՝ 1170 կրամ, հասակ՝ 18 սմ, 1 մլմ մետաղի հաստութիւն:

Այս տուեալներէն կրնանք հետեցնել, թէ տարատեսակ 3ը կենցաղավարում է 1689էն մինչեւ 1920ականներ, իգական սեռին կողմէ: Ան կենցաղավարում է Արեւմտեան եւ Արեւելեան Հայաստանի (հաւանաբար նաեւ Կիլիկիոյ) մէջ: Նմուշներէն ոմանք նոյն արհեստանոցի արտադրութիւն են:

ԱՄՓՈՓՈՒՄ

Եզրափակելով²², հայկական պղնձագործութեան բաղնիքի պղնձեայ կաւամաններու այս տիպի մեզի ծանօթ նմուշներուն հիմամբ կը պարզուին, թէ ասոնք պատկանած են հայուիներու, ունեցած են կիրառական եւ աշխարհագրական լայն ծիր՝ Այնթապ, Ալեքսանդրապոլ (Գիմրի), Դամասկոս, Թոքթաթ (Եդոկիա), Հալէպ, Սեբաստիա, Տիարապեքիր-Տիգրանակերտ: Թերեւս ասոնց սկիզբը կարելի է տանիլ ԺԷ. դարավերջ, եւ ընդգծել որ անցած են ձեւաւորման դարաւոր ճանապարհ:

²² Հասկնալի է, որ այս եզրակացութիւնները ենթակայ են փոփոխութիւններու՝ նոր նիւթերու յայտնաբերման պարագային:



Տարատեսակ 1՝ ԱՏ12, ԱՏ10, ԱՏ5, ՀԹ1, ՇԱ1



Տարատեսակ 1՝ ԱՏ9, ՀԹ2, ՀԹ3, ՍՍ3



Տարատեսակ Յ՝ ՍՓ1, ՄԻՐՊ1, ՄՊ1, ԱՏ1, Անծ.1



Տարատեսակ 3՝ ԱՀԹ4, ԱՀԹ6, ԱՀԹ7



Տարատեսակ 2՝ ՍԱԹ1, ՍԱԹ2, ՋԹ1, ԶԴԹ2

A SURVEY OF THE ARMENIAN COPPER BATH TASSUSED FOR CLAY

(Summary)

ANTRANIK DAKESSIAN (adakessian@haigazian.edu.lb)

The study focuses on the diverse shapes of a set of bath *tasses*, in which clay used as soap was stored and carried to the public bath, where women used the clay to wash their hair.

Through extensive research in different museums, catalogues, and collections the author has been able to collect data on some 60 such *tasses* used for clay and accordingly develop his observations. The study discerns three groups of *tasses* used for clay and notes that one of the groups was mostly used in Eastern Armenia, while another group was mostly used in Western Armenia, Cilicia and among the Armenian communities of the Middle East up to the 1950s. The third group, however, which has several versions in shape, weight and function, was used by both the Western and Eastern Armenians for other purposes as well.

The article provides a table that reveals the height, diameter, weight, and thickness of some of the *tasses* described here.